



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

## **ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի 1-ին եռամսյակում A-70-17 ծածկագրով «մեկ աղբյուրից գնում» ընթացակարգով իրականացված «ԲԿ-120-ի վերակառուցման աշխատանքներ (լրացուցիչ համաձայնագիր)»-ի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ**

**ԵՐԵՎԱՆ 2017**

**«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները**

**Մոնիթորինգի իրականացման հիմքը՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման №1 հավելվածով հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

**Մոնիթորինգի օբյեկտը՝** «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն):

**Մոնիթորինգի առարկան՝** Ընկերության կողմից 2017 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

**Մոնիթորինգի նպատակը՝** Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

**Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝** 2017 թվականի մայիսի 15-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 15-ը:

**Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝** Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

**«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «ԲԿ 120-ի վերակառուցման  
աշխատանքներ (լրացուցիչ համաձայնագիր»  
մեկ աղբյուրից գնում**

Հաշվի առնելով Ընկերության շինարարության և վերանորոգման բաժնի պետի 2017 թվականի փետրվարի 2-ի գեկուցագիրը Ընկերությունը 2017 թվականի փետրվարի 21-ին «Կասկադ Էներգո Սերվիս» ՍՊԸ-ի հետ կնքել է N°A-70/17 ծածկագրով համաձայնագիր նախկինում՝ 2016 թվականի հոկտեմբերի 19-ին, կնքված «ԲԿ 120-ի վերակառուցման աշխատանքների կատարման N°A-1227/16 պայմանագրում հետևյալ փոփոխությունները կատարելու վերաբերյալ՝

- պայմանագրին կցվել էին պատվիրատուի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի, կողմից տրամադրված նոր նախագծային փաստաթղթեր՝ ի լրումն նախկինում տրամադրվածներին,
- պայմանագրի ընդհանուր արժեքը ավելացել է 14 802 383 ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ:

2016 թվականին կնքված գործարքի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել որ.

1. Ընկերության 2016 թվականի գնումների պլանում տվյալ աշխատանքները ներառված չեն եղել: Համաձայն 2016 թվականի հոկտեմբերի 10-ի N°10/16 արձանագրության՝ Ընկերությունը հրատապությունից ելնելով որոշում է կայացրել ԲԿ 120-ի վերակառուցման աշխատանքների իրականացման համար 185 499 280 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ արժեքով ուղիղ պայմանագիր կնքել «Կասկադ Էներգո Սերվիս» ՍՊԸ-ի հետ,
2. Պայմանագրի կատարման վերջնաժամկետ էր սահմանվել պայմանագրի կնքման օրից 280 աշխատանքային օր,
3. Վճարման ժամկետ էր սահմանված պատվիրատուի գլխավոր տնօրենի կողմից կապալառուից ստացված համապատասխան աշխատանքների կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման ակտը և հաշիվ ապրանքագիրը վավերացնելուց հետո 30 բանկային օրվանից ոչ ուշ, բայց ոչ շուտ, քան վճարման ենթակա ամսվա 26-ը:



**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՆՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ**

**Ընկերության անվանում** «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

**Գնման անվանումը** «ԲԿ 120-ի վերակառուցման աշխատանքներ (լրացուցիչ համաձայնագիր)»

**Գնման ծածկագիրը** N°A-70/17

**Գնման ձևը** Մեկ աղբյուրից գնում

**ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ**

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1 Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և բավարար տեղեկատվություն են տրամադրում, ինչը թույլ է տալիս աուդիտ կամ անկախ ստուգում իրականացնել	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

**ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2 Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Համաձայնագիրը կնքվել է հաշվի առնելով շինարարության և վերանորոգման բաժնի պետի զեկուցագիրը: Համաձայն գնումների կարգի 12.9.2 կետի, հայտը հաստատվում է ԳԿՄ-ի որոշմամբ եթե ավելացվող գումարը գերազանցում է պայմանագրի ընդհանուր գումարի 10%-ը:
3 Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Համաձայնագիրը արդեն կնքված պայմանագրի շարունակությունն է, տվյալ դեպքում խելամիտ է որ աշխատանքները

Ստուգաթերթի պայման	Ա Ո Չ/Ո	Մեկնաբանություններ
		վերջացնի նույն կապալառուն, սակայն հիմնավորված չէ հիմնական պայմանագրի կնքման համար «մեկ անձից գնում» ընթացակարգի ընտրությունը:
4 Մինչև գնումների հրավերների հրապարակելը իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input checked="" type="checkbox"/>	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները:
5 Ձեռնարկվել են բավարար միջոցառումներ ոչ մրցակցային եղանակով գնումների ծավալը նվազեցնելու ուղղությամբ	<input type="checkbox"/> <input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/>	
6 Գնման գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակելուց բացի դիմել է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	<input type="checkbox"/> <input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/>	Հրատապությունից ելնելով՝ գնումը իրականացվել է «մեկ անձից գնում» ընթացակարգով:
7 Մասնակից մատակարարների հայտերի ընդունման գործընթացում ապահովվել է արդարությունն ու անկողմնակալությունը	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input checked="" type="checkbox"/>	Հրատապությունից ելնելով՝ գնումը իրականացվել է «մեկ անձից գնում» ընթացակարգով:

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

Ստուգաթերթի պայման	Ա Ո Չ/Ո	Մեկնաբանություններ
8 Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	<input type="checkbox"/> <input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/>	Հրատապությունից ելնելով՝ գնումը իրականացվել է «մեկ անձից գնում» ընթացակարգով:
9 Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	<input type="checkbox"/> <input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/>	Հրատապությունից ելնելով՝ գնումը իրականացվել է «մեկ անձից գնում» ընթացակարգով:

10	Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
11	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
12	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
13	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
14	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>

### ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
15 Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	Հրատապությունից ելնելով՝ գնումը իրականացվել է «մեկ անձից գնում» ընթացակարգով:
16 Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	Որոշումն ընդունվել է հաշվի առնելով Երևան քաղաքի զարգացման հեռանկարները, և գնումն իրականացվել է «մեկ անձից գնում» ընթացակարգով, քանի որ գնահատվել է որպես հրատապ գնում:
17 Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները:

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
18 Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

### ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
19 Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
20 Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	Պայմանագրի կատարման վերջնաժամկետ էր սահմանվել պայմանագրի կնքման օրից 280 աշխատանքային օր, որը սույն տեղեկանքի կազմման օրվա դրությամբ չի լրացել:
21 Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	Ընկերությունը կազմել է նախահաշիվ հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտում գործող նորմերը և գները: